Արձանագրության 3

Հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

02.10.2017թ.
Ժամը՝ 10:40

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ալավերդյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Դեմիրչյան /գնահատող/, Ա. Գասպարյան /գնահատող/
Ա. Բաբայան /բացող/, Ս. Շահբազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Ալավերդյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ալավերդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	Բավարար
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Ա. Ալավերդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/26» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակիցներ հայտարարել.

- **1,4,5,6,7,8,10,11,12,14,16,17,20-րդ** չափաբաժինների մասով «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ -ին,
- **2,3,9,13,15,18,19,21,22,23-րդ** չափաբաժինների մասով «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Ալավերդյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝

- **1,4,5,6,7,8,10,11,12,14,16,17,20-րդ** չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ին,

- **2,3,9,13,15,18,19,21,22,23-րդ** չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին,

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Ալավերդյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Ալավերդյան

Անդամներ՝ ---------- Վ. Դեմիրչյան

---------- Ա. Գասպարյան

---------- Ա. Բաբայան

---------- Ս. Շահբազյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան